ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> 11 2012թ. N: 314-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ Գ.ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ժ>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի 2012 թվականի նոյեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Շիրակի մարզային հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և <<Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության միաձուլման մասին>> տեղեկանքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի ժամանակավոր պաշտոնակատար Մուշեղ Մուրադյանին 2012 թվականի նոյեմբերի 23-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ հաստիքի կրճատման կապակցությամբ, միաժամանակ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ախուրիկի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի պարտականությունների կատարումից:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է